

702

9(42)

L-65

4. Dm pu 1919

2004

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱՆՆԵՑ ԳՐԱՏԱՆ

23.11.91.

2-85

ԼՕՅՏ ՃՕՐՃԻ ՀՌԶԱԿԱԻՈՐ ՃԱՌԸ

ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

ԹԱՐԳՄԱՆՆՑ

ԵՆՈՎ Ք ԱՐՄԷՆ



ԼՕՅՏ ՃՕՐՃ

ԶՈՆՈՒԱԾ ԹԱՐԳՄԱՆՆԻՉԷՆ

ՀԱՅ ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԱՐՏԱՏՊՈՒՄ ՁԻ ԹՈՅԼԱՏՐՈՒԻՐ

9620

2012

Կ. ՊՈԼԻՍ

1919

ՏՊԱԳՐ. Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

9(42)

L-65

57929-ահ



3302-Պ 2

Հայկական Դատին կրակոտ ախոյեաններէն եւ մարդկային ընկերութեան բա-
րեկարգութեան հզօր պաշտպաններէն մէկուն՝ Լօյս ձօրձի հռչակաւոր ճառը՝
դոր ժամանակին թարգմաններ էի «Թան»էն՝ այսօր հրատարակութեան տալով՝
նպատակս է Հայ ժողովուրդին ծանօթացնել Բրիտանական Կառավարութեան
բացորոշ ու հանդիսաւոր խոստումը՝ Հայութեան ձախտագիրին մասին՝ որով
այնքան մտատանջուած է ամէն Հայ իրաւունքով։ Ընթերցողը ճառին մէջ պիտի
գտնէ նաեւ աշխարհադպրոց պատերազմին ամբողջ հոգեբանութիւնը՝ հոյա-
կապ ատենաբանին հրաշունչ լեզուովը պատկերացուած։ Երբ նկատուի թէ՛ սր-
ջափ տառացի ճշդութիւնով այսօր իրականութեան փոխուած են անգլիացի վար-
չապետին մարգարէական շունչով եւ անդրդուելի հաւատքով արտասանած յայ-
տարարութիւնները, դադափար մը կը կազմուի անգլիական Ազգին մեծութեանը
վրայ՝ որուն տիեզերազօր կամքին ու բարձրացուցած Արդարութեան դրօշին կը
խոնարհին այն կայսերական թագակիր գլուխները անգամ՝ որոնք դեռ երէկ
բարբարոս յոխորտանքով աշխարհաստան յաղթանակ կը պոռչտային, ամէն
բերան բացած ատեն Աստուծոյ վրայ երդուըննալը առանց մոռնալու՝ միլիոնա-
ւոր ժողովուրդներ արիւնալից սպանդի մը ճահիճին մէջ խեղդելով։

Եւ, աշխարհակալութեան մեռախտէն բռնուած՝ Հայրենիքին միլեռանդ ազա-
տագրիչը ? ձեւացող Քայլէրը՝ որ Զօրապաշտութեան կատաղի իր մղձաւանջնե-
րովը համաշխարհային աւերիչ հրդեհին հրձիգը հանդիսացաւ, այսօր հայրենա-
դաւ վատութիւնով փախած է արտասահման, իր Հայրենիքին հետ կործանելէ
ետքը Եւրոպայի այնքան չքնաղ մասերը։

Զօրապաշտութեան կայսերամու խելագար ցնորատեսը՝ փոխան Յաղթանակի՝
իր արիւնուշտ սեւ անունով՝ Պատմութեան կը կտակէ աշխարհաքանդ փլա-
տակ մը։

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԼՕՅՏ ՃՕՐՃԻ ՃԱՌԸ

ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

ՅԱՐԳԵԼԻ ՈՒՆԿԱՆԴԻՐՆԵՐ.

Կարգացի ու կրկին կարգացի՝ այն կրկնակ ուշադրութիւնով որ իմ
ներկայ պաշտօնիս պարտականութիւնը կը հարկադրէ ինծի, վերջին ճառերը
Աւստրիաի և Գերմանիաի ինքզինքնին վարիչը հռչակող մարդոց։ Պիտի զգու-
շանամ ձեր միտքը և տրամաբանութիւնը չարչարելէ և չպիտի ըսեմ թէ ինչ
պէտք է եզրակացնել այդ ճառերէն. ատիկա թանկագին ժամանակ մը կոր-
սնցնել պիտի ըլլար։ Մինչդեռ Գերմանիա մեծ վստահութիւն մը ցոյց կու տայ
ընդհանուր կացութեան մասին, երկրորդը՝ քիչ մը աւելի իմաստուն՝ կ'ար-
տայայտուի աւելի՝ համեստութիւնով, աւելի՝ ազնուամտութիւնով և աւելի՝
հաշտասէր խօսքերով։ Մէկը՝ անօգուտ նկատած է քրքրիլ իր նախնական



Weir

22133

նիւթին զանազան տարատեսեւ մասերը՝ ինչ որ իր ցեղին խիստ յատկանշական մէկ դէպքը կը կազմէ. միւսը՝ բաւական ձեւակերպած, սղոցած է այդ նախնական նիւթը՝ որպէսզի երեւոյթը տարբեր ըլլայ:

Չեւր տարբեր է, բայց միջուկը կը պարունակէ նոյն բնազդը՝ բոլոր ձառերուն մէջ: Ինչպէս որ գիւրաւ կրնաք դուշակել, ես վայրկեան մը չեմ դադրիր մանրակրկիտ զննութեան մը ենթարկելէ հորիզոնը. բայց ո՛ր և է նշան թոյլ չի տար եղրակացնել թէ՛ հաշտութիւնը մօտ ըլլայ: Հեռու աղկէ, հարեւաւոր պարագաներ զիս կը մղեն հակելու այն ենթադրութեան թէ՛ այս պայքարը, ուր կը տիրէ «Լիմեթ» քի չլիմեթի՝ երկասյուրութիւնը՝ պէտք է վերջնապէս վճռուի մէկ կամ միւս խմբակցութեան բացարձակ մահովը (Էսուլիքի օրեակէն. — Շատ շիտակ): Բայց ես պարտականութիւն կ'ստանձնեմ որ՝ այդ եղբրական գործողութեան ենթարկուողը Գերմանիան ըլլայ: Այս ենթադրութիւնը պէտք է մեր ուղեղներուն մէջը դրոշմուի՝ չեղտուած ուժով մը՝ երբ միտք բերենք այն դասը զոր քաղեցինք Պրէսթ-Լիվսթօքի քօնֆէրանսէն: Հիմա տիեզերք գիտէ թէ՛ Գերմանիայի մէջ ռազմավարութիւնը անմատչելի է, որովհետեւ անիկա որ և է կերպով լքած չէ գերագահութեան իր դիտումները: Անգլիա ալ, իր կողմէ, ո՛ր և է կերպով լքած չէ ռճրագործները մահուան դատապարտելու իր դիտումները: Կը մնայ գիտնալ թէ, պարոններ, երկու դիտումներէն ո՞րը հրաշալի կերպով մը իրականութեան պիտի փոխակերպուի (Մախահարուքիւններ): Նոյն ինքն գերման ժողովուրդը, որուն իմաստութիւնը (Միծաղ ամբողջ սրահին մէջ. ամերիկեան օրեակէն՝ ըսէ՛ք՝ անմտութիւնը) երեւակայութեան սահմաններէն անդին չանցնիր, կատարեալ ըմբոստացումի մէջ է, ինչ որ, լայն ձեւով յեղափոխութեան մը պիտի չըջափոխուի, երբ լաւ ըմբռնէ ամբողջ այն անաւորութիւնը՝ զոր իր անպատասխանատու կառավարութիւնը իր ծոցին մէջ կը ծածկէ: Սակայն մենք միայն իր յամեցող արթնութեանը վրայ չենք հիմնուիր, որովհետեւ վառօդը և գնդակը բաւական հզօր երկու տարրեր են՝ որոնք կրնան յարմար ժամանակին խորտակել կզակներ (Մաքիեր):

Հակառակ մեր կրկնակ ապացուցումներուն, Ռուսիա կարծեց որ Գերմանիա օտար չէր իրաւունքի և արդարութեան և Ռուսիա բանակցութեան մտաւ անոնց հետ՝ որոնք կէս դարէ իվեր դարձնեցին հրէշներու ծրագիրներ՝ որոնց հետեւանքները կը ճանչնաք: Բայց թէ և մեր զինակիցը կազմալուծուի վիճակի մը մէջ ըլլայ, հիւանդութիւնը վտանգաւոր և անդարմանելի չէ: Ռուսիայի մէջ դէպքերը իրարու պիտի յաջորդեն տակաւին երկար առեմն՝ յանգելու համար ելքի մը, ճիշդ մեր նախատեսածին համեմատ, և ապացուցանելու նաև Պափերացի կոմսին (Հերթլինկ) թէ՛ իր պոլսական տիփլումաւոր գործակալները (Ֆրանսական օրեակին մէջ. — Այդ պատիւը կը վերաբերի Պ. Քիւլմանի: — Լոնս Տեպի հեգնամով եւ վանկեր կրկնելով. — Պարոն Ku hmanին) մեր ձեռքին մէջ խամաճիկներ են: Դերմանացիները կը ջանան օգտուիլ Ռուսիայի տկարութենէն, զայն փետտելով՝ իրենց ապահովելու հողամասեր՝ որոնց տիրացումը իրենց ժողովուրդը պիտի փրկէր այն սովէն՝ որուն մէջ կը մահանայ: Մենք միտք չունինք դադրելու իրենց ստամոքսը սրելէ (ծիծաղ). պաշարումը կը տեւէ և պիտի տեւէ աւելի դօրեղ. և չպիտի դադրի իրենց պատահական առաջխաղացութենէն, որովհետեւ ինչ որ կրնայ անցնիլ մարտողական գործողութենէ՝ կա՛մ պիտի գրաւուի, կա՛մ պիտի սպառուի՝

մինչեւ մոխիրը (Կեցցե՛. ծափեր): Ինչպէս որ քանի՛ քանի՛ անգամներ պարզեցի, Ֆրանսական և անգլիական կառավարութիւնները արդէն ձեռք առած են բոլոր պէտք եղած միջոցները՝ արմատապէս անհնար դարձնելու համար իրենց թշնամիներուն՝ ո՛ր և է օգուտ ձեռք բերել. նաև ամէն միջոց ձեռք առած են ոչնչացնելու համար զանոնք՝ որ կը հետապնդեն ցնորական արդիւնքներ՝ որոնց շուքին անգամ չպիտի տիրանան:

Մեր գինուորական կացութիւնը մեղի հպարտութիւն կը ներշնչէ՝ ամէն անգամ որ զայն կը քննենք: Թշնամի հողի մէջ առաջացումը չէ (այդ մասին մենք գերազանց ենք՝ եթէ նկատի առնուին գաղթավայրերը և մեր յաղթանակները Արեւելքի մէջ). ո՛չ ալ այս կամ այն կէտէն ներս թափանցելու կարողութիւնն է որ՝ իրաւունք կու տայ մեղի գոհանալ: ԴՐԱՄ. ԶԻՆՈՒՈՐ. ԹՆԴԱՆՈՒԹ. ահա՛ այն գործօնները՝ որոնք պատերազմի մը ճակատագիրը կը վճռեն: Այս երեք գործօններուն մէջ՝ գերազանցութիւնը մերն է. այս երեք ուժերով մենք պիտի ջախջախենք մեր հակառակորդը, միայն այս երեք գործօններով, և առանց հաշիւի առնելու ամերիկեան անագին ուժերը և նկատի առնելով Ռուսիա պատահած դէպքերը (Խելալեղ ծափեր):

Գերազանցութիւնը՝ ամէն տեսակէտով՝ ՌԱԶՄԱԿԱՆ, ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԵԼԵԻՄՏԱԿԱՆ՝ մեր կողմն է. մերը պիտի ըլլայ նաև ՎԵՐՋԵԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ: Թշնամին՝ նոր յարձակումներու համար ջգգրգիւ պատրաստութիւններ կը տեսնէ: Ո՛ւր տեղի պիտի ունենայ ան. ո՞ր կողմը: Անկարելի է կանխագուշակել աղ. որովհետեւ թշնամին ունի երկաթուղիի հոծ ցանց մը՝ որով կրնայ արագօրէն մէկ ճակատէն միւսը գինուոր փոխադրել: Բայց բան մը կայ որ ստոյգ է: Ինչ ժայռի որ ալ ընդհարիլ փորձէ, ո՛ր ճակատին դէմ ալ որ Հինտենպուրկ ընտրէ ջարդել իր ոչխարները, իր գլուխը պիտի ջախջախուի (Մաքիեր): Վերսայի ժողովը, ի մէջ այլոց գլուխ հանեց նաև գործողութեան միտքեան հսկայ աշխատանքը, ինչ որ ասկէ ետքը իր ամբողջ արժէքովը երեւան պիտի գայ: Մեր սահմանագլուխին իւրաքանչիւր զիրքը՝ Վէռտէօն մըն է: Այդ տեսակ ամբողջութիւններ կրնան գրաւուիլ. բայց պէտք է իւրաքանչիւր քառակուսի մետրի համար 10,000 մարդ վճարել: Եթէ Հինտենպուրկ ինծի կը հատուցանէ այդ փոխարինութիւնը, չառ հաճոյք պիտի տէնպուրկ ինծի կը հատուցանէ այդ փոխարինութիւնը (Սֆանչելի. Կեցցե՛ մեր նախադրութեանը): Մենք չպիտի չեղինք նուազագոյն զո՛ն ունենալու մեր ծրագիրէն, թէ և մեր զինուորներուն թիւը կարող կ'ընէ մեզ տեւական յարձակողական մը կատարելու: Անգլիական բանակը վիթխարի պիտի ըլլայ՝ նոր գորահանութիւններով: Մեր ռազմանիւթերը նշանաւոր են թէ՛ քանակով և թէ՛ կատարելագործութիւնով մը՝ որ անծանօթ եղած է մինչեւ հիմա արհեստական գիտութեան: Մեր օդային ուժերը ասպարէզ կը կարդան թշնամի օդային ուժերուն. մինչդեռ մեր նաւատորմիդը կ'սպասէ միայն այն առիթին՝ երբ Քիէլի ծովակալները որոշում պիտի տան թողելու իրենց հմայիչ մկնախորհրդը (Ամբողջ սրահին մէջ խնդուի աղաղակներ) և մենք չպիտի թերանանք իրենց շահեցնելու յաղթանակ մը՝ աւելի փայլուն քան Սքակէրրաքինը և կամ Տարտանէլինը (Խանդավառ ծափեր՝ Սըր Էրիկ Կեսսեի խմբակցութեան մէջ):

Մեծ Բրիտանիայի պատերազմի ծրագիրը տակաւին 16 տարուան պայմանաժամ ունի: Թէ Գերմանացիները ատոր կրնա՞ն տուիլ կամ ո՛չ՝ կրնան խորհուրդ հարցնել նիւթին մասնագէտ եղողի մը. (Ձայներ. — Տօքթ. Հօֆէն-

ցօլէռն ! Բռօֆ . Հէռթլինկ !) : Սահող ամէն վայրկեան՝ մեզ մեր յաղթանակին կը մօտեցնէ . մեր յաղթանակը՝ Գերմանիաի քայքայումով : Եթէ աշխարհի բոլոր պետութիւնները միայն մէկ մարմին կազմէին , անոնց միացած ուժը աւելի տկար պիտի ըլլար քան անցնող ժամանակը : Ժամանակը է՛ն զարհուրելի գործօնն է՝ որ երբեք իր անունը հռչակած ըլլայ այս պատերազմին մէջ . ժամանակն է որ մեզի կը բերէ ամէն օր ամէն տեսակ օժանդակութիւն . ժամանակն է որ հետզհետէ սովի կը մատնէ կեդրոնի տէրութիւնները . ժամանակն է որ ամէն վայրկեան կ'աւելցնէ մեր ուժերը և կը տկարացնէ թշնամիին ուժերը . ժամանակն է որ կը մօտեցնէ այն գերագոյն վայրկեանը՝ ուր Գերմանիա յանկարծ ինքզինքը առանց որ և է զինուորի պիտի գտնէ , մինչդեռ բազմաթիւ միլիոններով զինուորներ պիտի ունենանք մենք մեր կողքին : Այս գերազօր գործօնը՝ ԺԱՄԱՆԱԿԸ , յարգելի պաշտօնակիցներ , հաւատարիմ զինակիցն է Համաձայնութեան և մահացու թշնամին անոնց՝ որոնք պատերազմին պայթելուն պատճառ եղան , վայրենութիւնով մը՝ որ օրէնքի կարգ կ'անցընէ ամէնէն սեւ դրուագները աւազակութեան , եղեռնագործութեան և յեղուգակութեան :

Անհատական ոճիր մը ազգային ոճիրի չարափոխելով , անոնք նետուեցան հերոսական Սերպիաի վրայ , աշխարհային հրդեհը բռնկցնելու համար : Կորսնցնելով իրենց մտային կարողութիւնները (Բացազանչութիւններ .— Ինչ որ երբեք չեն ունեցած ...) անոնք կարծեցին իրաւունք ունենալ քաղաքակրթութեան հետ զբօսնելու և անոր դիւրաւ չղթայ անցընելու : Իրենց բարբարոսութիւններէն բա՛ն մը մոռցուած չէ : Անոնք աւերեցին , թալլեցին , փճացուցին , ջարդեցին , կիներ , ծելեր , տղաքներ , կենդանիներ , այրեցին տուններ , գիտութեան և գեղարուեստի գործեր , իրենց շրջապատը անապատի վերածեցին : Հոսները և Վանտալները , Թամաուլան և Ներոն , Աթթիլա և Կալիկուլա , կը խոնարհին իրենց արդիական վայրագութեան հրաշագործութիւններու կատարելագործութեանը առջեւ : Անոնք ապացուցին որ 50 տարուան ընթացքին երբեք գործած չեն . այլ ընդհակառակը հնարած են ինչ որ լուսնոտ աւազակներու ջոխր մը կրնայ ըզձալ : Բրուսիա և իր վայրի գաղաններու թագաւորութիւնը (Մֆանչելի՛ , Եսի՛ Եիթի՛) յետոյ լքեց հաստատուն հողը՝ հեղուկ մակերեւոյթը սքանչալանելու համար իր մարդակերի քաջագործութիւններով : Իրենց անդարմանելի աշխարհաւերութեան կարողութիւնը ա՛յնչափ յայտնապէս երեւան բերին որ՝ բովանդակ մարդկութիւնը անկէ զարհուրեցաւ , քարացաւ և սոսկումով լեցուեցաւ ալք գերբնականներուն դէմ :

Նոյնքան անճառելի է իմ հաճոյքս հաստատելու որ՝ իրենց ընդծովեաներուն սնանկութիւնը միջոց աւելի գայթակղալի կը դառնայ : Սկիզբները , երբ բաւական թիւով նաւեր կ'ընկղմէին , անոնք չատ քիչ կը չափազանցէին թուանշանները : Այսօր , ո՛րքան ծովահնները ձախողին , ա՛յնքան իրենց կատաղութիւնը կ'աճի և զայրոյթի կը փոխուի՝ թուղթի վրայ աւելցնելու ինչ որ իրականութիւնը կը մերժէ իրենց : Մեր պաշտպանութեան միջոցները միայն կատարելագործութեան կը կարօտին՝ արմատական ըլլալու համար : Մենք կ'ընկղմենք իրենց չինել կրցածէն աւելի ընդծովեաներ . անհունապէս աւելի քիչ են մեր կորսնցուցած նաւերը՝ որոնց տեղը կը յաջողինք ուրիշներով լեցնել : Այնպէս որ , երբեմն պատերազմէն առաջուանէն աւելի անդրադառնալու համար կը շրջադային և կը պարենաւորեն մեր երկիրը : Իրենց ծովահնութեան

թեան արդիւնքը ա՛ն պիտի ըլլայ որ՝ օր մը իրենց ընդծովեաները պիտի անհետանան և մեր առեւտրական նաւատորմիդը աւելի մեծ պիտի ըլլայ՝ քան պատերազմէն առաջ : Կը դիմեմ օրինակի մը : Այս վերջին երեք ամսուան ընթացքին , երեք անգամ աւելի ընդծովեայ ընկղմեցինք քան նախորդ եռամսեակին , մինչդեռ մեր կորուստները 96 % աւելի քիչ են նոյն շրջաններուն : Եւ , պարոններ , այդ մեքենաներն էին որ՝ մեզ պիտի արգիլէին միակ փամփուշտի մը մեզի հասնիլը , այդ մեքենաներն էին որ մեզ պիտի սովամահ ընէին և ճարահատ հաշտութեան մը հարկադրէին : Աս էր հաշիւը , ա՛ս էր ծուռ հաշիւը՝ Գայդէրին լիազօրներուն : Բոլոր այն «հաշիւները»՝ զորս ըրած են , ճշմարիտ ծաղր մըն են մաթեմատիքական գիտութիւններու և ամէնէն տարրական տրամաբանութեան (երկարատեւ ծափեր) :

Եւրոպան ստրկութենէ ազատագրելու համար մենք պէտք է՝ զօրապաշտութիւնը հիմէն իսկ արմատախիլ ընենք , և ասոր համար՝ միակ միջոց մը , միակ մէթոտ մը , միակ սիսթէմ մը կայ , անդուլ , անդադար , անխոնջ , անարգել պատերազմն է ադ . ԾԱՅՐԱՅԵՂ , ՊԱՏԵՐԱԶՄԵՆ Է ԱՂ . . . (la guerre à outrance) :

Կը փութամ այս առիթով հաստատել թէ՛ տարօրինակ կը գտնեմ այն նպատակաւոր ամբաստանութիւնը՝ զոր զանազան կողմերէ կ'ուզեն և որուն համեմատ իբր թէ անգլիական կառավարութիւնն է գլխաւոր պատճառը պատերազմին երկարելուն : Այդ ամբաստանութիւնները յիմարական են : Անգլիական ժողովուրդը կը հասկնայ որ իր կառավարութիւնը բաղձացող է կնքելու տեւական հաշտութիւն մը , որ չըլլայ թղթամուրհակ մը և միայն օրինականացած ստորագրութիւններովը անոնց իսկ , որոնք խղճահար չպիտի ըլլային օր մը պատերազմը վերսկսելու : Կնքել հաշտութիւն մը առանց վստահ ըլլալու անոր տեւականութեանը , անոր յաւիտենականութեանը , ատիկա ուրիշ բան չպիտի ըլլար , բայց եթէ սոսկալի ոճիր մը գործել , որուն ընթացքին ո՛չ Անգլիա , ո՛չ ալ ուրիշ մէկը կարող չպիտի ըլլար յանցաւորները պատժելու :

Այն պետական անձը՝ որ այդ անխորհուրդ արարքը պիտի գործէր , իր վրայ պիտի հրաւիրէր ապագայ սերունդներուն անէծքը . իւրաքանչիւր կենդանի էակի կեանքը մազի թելէ մը կախուած պիտի ըլլար . դամոկլեան սուրը կախուած պիտի ըլլար քաղաքակրթութեան զլխուն վրայ՝ որ քանի մը ամենակարող զինուորականներու ձեռքին մէջ պիտի գտնուէր ժողովուրդներու կեանքը ուրիշ բան չպիտի ըլլար՝ բայց եթէ դառն գետ մը՝ ուր պիտի գային խեղդուիլ անհամար անմեղներ : Ատիկա պիտի նշանակէր հին օրերու վայրենութեան վերադառնալ : Ես հանդիսաւոր երգում ըրի այդ յիմար արարքը արգիլելու : Փոխանակ այդ տեսակ հաշտութիւն մը ստորագրելու , ես պիտի նախընտրէի տեսնել բովանդակ Մեծ Բրիտանիան , իր գաղթավայրերովը մէկտեղ , փոխակերպուած միացող աւերակներու կոյտի մը : Որչափ ատեն որ միակ Անգլիացի հոգի մը կը չնչէ զինքը շրջապատող օդը , որչափ ատեն որ միակ Բրիտանիացիի մը սիրտը կը բաբախէ , ո՛չ մէկ դաշնագիրի վրայ ստորագրութիւն չպիտի դրուի , մինչև որ զայն ետքէն խանգարելու ընդունակ եղող բոլոր չարաչուք ազդեցութիւնները չուած չըլլան Մահերու Կայսրութեան մէջ : Պատերազմին շարունակուելուն պատասխանատուութիւնը՝ իր ամբողջ ծանրութիւնովը՝ կ'իյնայ կեդրոնի տէրութիւններուն վրայ , որոնք աշխարհի կէսը իրենց կցելու մղձաւանջներուն մէջ , չեն ուզեր համակերպիլ հիասթափեցուցիչ և անագորոյն

զարթնումին՝ որ կը հարկադրէ վերահասանքիւններ, վերափոխութիւններ և երաշխաւորութիւններ (restitutions, réparations, garanties): Քայլէրը և իր ժանգոտած վարչապետները պէ՛տք է սորվին արտասանել՝ բարձրաձայն և ամբողջ աշխարհի առջեւ, այս երեք բառերը և աղէկէ ետքն է միայն որ Համաձայնութիւնը պիտի գիտցնէ թէ՛ տրամադիր է իրենց ականջ կախելու: Ռուսիաի կազմալուծումը յայտնապէս աւելցուցած է բրուսիական ամբարտաւանութիւնները: Գերմանիայը կը հաշուեն որ՝ մէկ կողմին վրայ մեր ուժերուն նուազումը և իրենց ուժերուն հակառակ կողմին վրայ աւելնալը՝ զիրենք կարող պիտի ընէ մեծ հարուած մը իջեցնելու: Մինչև հիմա ուրիշ ինչ բաներ չերեւակայեցին: Անոնք ժողովուրդներու ազատութեան դէմ նիւթեցին ամէնէն սոսկալի դաւը՝ որ երբեք մտածուած ըլլայ:

Ժողովուրդներու ազատութիւնը ուռուցիկ նախադասութիւն մը չէ: Այդ ազատութիւնը նուիրական բան մըն է՝ որուն առջեւ պէ՛տք է խոնարհին ամէնէն մեծ տէրութիւնները: Անիկա անկողմնակալօրէն պէ՛տք է գործադրութեան դրուի հանդէպ իտալիաի և հանդէպ Աւստրիա-Հունգարիաի բոլոր ժողովուրդներուն: Պիճիքան պէ՛տք է ազատ ըլլայ, ո՛չ թէ գերմանական սուրին տակ, ալ ի՛ր իսկ սուրին տակ, և ո՛չ թէ հարկատու երկիր մը ըլլայ, այլ ազատ երկիր մը:

Գանք, պարոններ, Ալլաւս Լոնէնի կարեւոր խնդիրին: Մեր թշնամիները կը թուին չհասկնալ իմ նախորդ յայտարարութիւնս, որուն մէջ կը պահանջէի անոր վերանկատարութիւնը (réconsideration): Իբր խօսք չհասկցողներ՝ պէ՛տք է իրենց հաւատք ընծայել: (Ծիծաղներ բոլոր արուներուն վրայ, մասնաւորապէս Ֆրանսական օրեակին մէջ): Շնորհնք իրենց բացատրութիւն մը: Ալլաւս Լոնէնի վերադարձը պէ՛տք է տեղի ունենայ առանց ամենաչնչին առարկութեան, նոյն իսկ եթէ միայն տոտր համար բովանդակ աշխարհը բոցերու ճարակ ըլլայ (Ռոստոմի նման գողացող ծափեր): Բացի զինակիցի մեր պարտականութենէն, մեր համակրութիւնը Ֆրանսաի համար, քաղաքակրթութեան և գիտութեան այդ լոյսին, մեր սէրը այդ այնքան սիրելի որքան զմայելի ժողատութեան այդ լոյսին, մեր սէրը այդ այնքան սիրելի որքան զմայելի ժողատութեան այդ լոյսին համար՝ այնքան մեծ է որ՝ իւրաքանչիւր Անգլիացի մինչև վերջին վտարին համար՝ այնքան մեծ է որ՝ իւրաքանչիւր Անգլիացի մինչև վերջին վտարին համար (Ծափերը կը ճառնին անանկ աղջունները պիտի կուտի այդ նպատակին համար (Ծափերը կը ճառնին անանկ աղջունները պիտի կուտի մը՝ որ նախագահին մէկ նշանին վրայ՝ բարապանները դուրսի դուռները կը գոցեն կիսովի): Կը յուսամ որ փոքրամի մէջ առանց բառարանի պիտի հասկնան խօսքերուս իմաստը և մտադրութիւններուս ոգին: (Ֆրանսական օրեակին:—Վիլհելմ Բ. մասնազիտօրէն կրնայ իբր բառարան ծառայել):

Նոյնպէս Թիւրքիաի բոլոր ձեռնած ժողովուրդները պէ՛տք է փրկուին այդ թշուառ հարկատու երկիրին լուծէն: ՀԱՅԱՍՏԱՆԸ, ինչպէս ամէն ուրիշ-ներ, պէ՛տք է տեսնէ ժողովուրդներու անկախութեան գործադրութիւնը: Անհատական դաւաճանութիւնները անգամ մըն ալ կ'ապացուցանեն որ՝ իւրաքանչիւր ժողովուրդ պէ՛տք է ապրի ինքն իր մէջ, իր հայրենիքին մէջ, ինքնիրմով, որպէսզի խաղաղութիւն վայելէ:

ՀԱՅԵՐԸ պէ՛տք է վերադառնան իրենց անկախութիւնը: Շատ կարեւորութիւն չունի՝ երբ արդար սկզբունքներու գործադրութեան համար՝ այս կամ այն երկիրը ենթարկուի հողային տախնուվրայութիւններու, մանաւանդ երբ խնդիրը աւազակներու երկիրի մը վրայ է, ուր, գերմանեաթաղանը կը գործէ գահաւաճանք իշխանին վրայ, ինչպէս նաև նախկին Սուլթանի մը (Ջաւադական

բացագանչութիւններ ամեն խաւի մէջ) և ուր արքայապանութիւն արքայապանութեան կը յաջորդեն այն տեսակ ճարտարութիւնով մը՝ որ Պերլինեան հոտ կ'զգացուի: Ճշմարիտ սոսկումի զգացումով մըն է որ կը դիտենք ոճիւրի ճամբուն մէջ առաջդիմութիւնը երկիրի մը՝ որ Բրուսիաի հետ իր դաշնակցութենէն առաջ միայն զիսութիւն ունէր: Այդ երկիրը, պարոններ, չհոն համար իսկ անոնք՝ որոնք հոն կ'ապրին, պէ՛տք է անդառնալիօրէն վստուի եւրոպական ցամաքէն դուրս, քանի որ վնասապէս անընդունակ է արեւմտեան քաղաքակրթութեան (Ծափեր):

Յետոյ կու գայ Իսրայելացի ժողովուրդը, որուն մասին կը փութամ ամբողջ ուժովս չնշտել Միացեալ Նահանգներու Նախագահին բոլոր գովեստները, որոնք այնքան ճիշդ են՝ որքան լիովին արժանաւոր (խանդավառութիւն՝ Լոնսերու օրեակին մէջ): Մեծ Բրիտանիա արդէն կը յայտնէ իր դիտաւորութիւնները Պաղեստինի մէջ: Անգլիաի, Ֆրանսաի և միւս դաշնակիցներուն անունով պէ՛տք է հաղորդեմ ձեզի մեր որոշումը թէ՛ Իսրայելացիները պէ՛տք է ստանան ժողովուրդի մը բոլոր իրաւունքները՝ ամենալայն ձևով (Ծափեր): Թիւրքիաի առեւտուրը պիտի փլչէր առանց այս տարրին՝ որուն պէ՛տք է շնորհուի կարողութեան մատայլը: Հայերը և Իսրայելացիները կեանքի աւելի իրաւունք ունին և զայն պիտի ունենան մեր պաշտպանութիւնովը, քան անոնք որոնք անոնց տգէտ հալածիչներն են (Երկարատեւ ծափահարութիւններ եւ հաւանութեան շարժումներ ամբողջ սրահին մէջ):

Միայն մեր պաշտպանութիւնը չէ որ պիտի վայելն անոնք, այլ նաև չէղոքներունը, որոնց զգացումները հանդէպ մեր հակառակորդներուն ամէն բացատրութենէ վեր են: Այդ չէղոքները ամէնքն ալ մեր կողմը պիտի անցնէին, եթէ անոնց օգնութիւնը մեզի անհրաժեշտ ըլլար:

Ներկայիս, Միացեալ Նահանգները՝ իրենց զինուորական, տնտեսական և ելեւմտական առասպելական բովանդակ ուժովը կը մտնեն բեմ և Ռուսիաի պակասը լեցնելէն աւելին պիտի ընեն (Ծափեր՝ ամերիկեան օրեակին մէջ): Մօտաւորապէս մէկ միլիոն զինուոր կը մարզուին արդէն Ֆրանսաի մէջ և երկրորդ միլիոն մը պատրաստ պիտի ըլլայ այս գարունին: Զօրաշարժը Ամերիկայի մէջ կը հետապնդուի հրաշալի արագութիւնով մը, մրցակցօրէն ծովային և օդային շինութիւններուն: Վերսայի ժողովին մէջ բոլոր դժուարութիւնները հարթուեցան: Մեր տնտեսական կացութիւնը սքանչելի է: Չնչին սեղմումները գորս մենք կը գործադրենք՝ միայն նախազգուշական միջոցներ են: Ուտեստեղէնի զիններուն բարձրացումը՝ Ֆրանսաի և Անգլիաի մէջ՝ անշուշտ է: Մեր թշնամիներուն երկիրներուն մէջ այդ բարձրացումը առասպելական է: Մեր քաջարի բանակներուն բարոյականը՝ ամէն բաղձնաքէ վեր է: Արդէն անիմաստ պիտի ըլլար թերեհաւատութիւն սնուցանել: Պատերազմէն մեր յաղթական ելլը՝ չի՛ կրնար տարակոյսի ենթարկուիլ, ո՛չ մէկ դիպումով՝ ո՛չ նախաեստում, ո՛չ չնախաեստում դիպումով (Ծափեր): Դիպումները միայն յապաղում կրնան պատճառել, ինչ որ անշուշտ ողբալի է: Բայց ծիծաղելի պիտի ըլլար ենթադրել որ՝ այսքան սոսկալի աշխատութիւն մը կարելի է դուրս հանել շունչանի խաղի մը պէս: Նկատողութեան առէք որ՝ եթէ մենք ուղէինք մեր և մեր դաշնակիցներուն ուժերը շարժումի մէջ դնել Գերմանիաի ըրած չափով, մենք՝ սա պահուն երբ կը խօսիմ՝ ինը անգամ գերադանց պիտի ըլլայինք անկէ: Երբեք պէ՛տք չկայ սակայն ատանկ ճիգերու: Առանց մեր

դորուծիւնը ընկձելու՝ մենք ամէն բանի մէջ գերազանց պիտի ըլլանք և պիտի ձեռք բերենք Իրաւունքի և Արդարութեան մեր նպատակները: Անգլիացիներուն ջիղերը պէտք է զօրաւոր ըլլան: Ես ինքս ատոր օրինակը պիտի տամ ձեզի, որքան ատեն որ հաճիք ձեր վստահութիւնը չնորհել ինծի (Ամեն օրեակներու մէջ՝ հաւանութեան նշաններ. Էսփուրի օրեակէն. — Յաւիտենական օրէն): Իմ ջիղերս ամենատաք հնոցներու մէջ եփուած պողպատի կը նմանին: Իմ ջիղերս պիտի տոկան ամէնէն սոսկալի ճնշումին և արհամարհանքով պիտի կրեն ամէնէն զարհուրելի հարուածները (Բացազանցութիւններ. — Կեցցէ՛ Պ. Լօյտ Ճօրճ):

Այս բոլոր նպատակներուն համար Անգլիա պիտի կռուի: Անգլիա ա՛յն ատեն միայն սուրը վար պիտի դնէ՝ երբ այդ նպատակները գլուխ ելած ըլլան: Թողէ՛ք որ մեր թշնամիները մոլորին բանդագուշանքի մարդին մէջ՝ զառանցելով որ՝ «մանէօվրը»ներով պիտի յաջողին մեզ ուղղակի վիճաբանութեան մէջ մտցնել: Այդ վիճաբանութիւնը տեղի կրնայ ունենալ միայն այն ատեն՝ երբ բնաջնջուած կ'ըլլան այն չարագործ գոյութիւններ՝ ուր եկած են մարմնանալ բրուսիական ցեղին բոլոր կեղտերը. այն ատեն միայն՝ երբ բրուսիական զօրապաշտութիւնը հիմէն արմատախուռած կ'ըլլայ: Մենք մեր զաւակներուն կտակած ենք կատաղի պատերազմին կտակը: Անգլիացի ժողովուրդը պիտի գիտնայ բարձր կանգնիլ այն անօրինակ նախադրեալութեան դէմ՝ որ գործուեցաւ: Պէտք է քաջութիւն և յարատեւութիւն ունենալ, որովհետեւ խնդիրը մեր և քաղաքակրթութեան գոյութեանը վրայ է: Վարձատրութիւնը կ'արժէ՛ գործուած ճիգը: Մեր պատիւը պիտի ոտնակոխուէր, մեր արժանիքը պիտի խորտակուէր, մենք խայտառակութեան մէջ պիտի ապրէինք, եթէ չեղէինք այս ճամբէն: Անգլիական ամէն քաղաքացի իր ինքնութիւնը նուստացած պիտի գտնէր, եթէ մենք դժբաղդութիւնը ունենայինք քշուելու կանխաճառ հաշտութեան մը անելին մէջ: Պատերազմին հարկադրած իւրաքանչիւր վիշտին՝ խորհեցէ՛ք որ Անգլիացի էք և ձեր պատիւը կը պահանջէ մաքառիլ մինչեւ վախճանը: Կառավարութիւնը կը ճանչնայ իր պարտականութիւնը և փափաքող է պատերազմը դադրեցնելու: Ո՛րքան դուք զօրավիգ ըլլաք կառավարութեան, ա՛յնքան մօտ պիտի ըլլայ հաշտութիւնը: Ներքին խռովութիւնները ուրիշ բանի չպիտի ծառայէին՝ բայց եթէ թշնամին չփոթեցնելու մեր կացութեան մասին: Թշնամիին իւրաքանչիւր հաւատարմութեան խայտառակութեան մենք պէտք է պատասխանենք ՓԱՄՓՈՒՇՏՈՎ, որովհետեւ ինչ որ պիտի փրկէ երկրագունդը զինուորական ժանտախտէն, ինչ բան՝ որուն համար յաւիտենական երախտագիտութիւն պիտի չահինք մենք, ինչ բան՝ որուն համար մեր զաւակները խորունկ օրհնութիւնով պիտի յիշեն մեզ, ատիկա մէկ բան է միայն, — ծայրայեղ պաշտեալով, որովհետեւ միայն ա՛յն է որ կ'երաշխաւորէ մեզի: **ՅԱՂԹԱՆԱՊԸ:** (Զարհուրելի ծափեր կը թնդացնեն սրահը. Լօյս ձօրն շնորհաւորութիւններ կ'ընդունի ամեն կողմէ):

Ամբողջական կամ մասնակի արտատպում չի թոյլատրուիր



ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

Կ. Պոլիս, Չաքմաքճըլար, Թիւ 20

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լինչ, Հայաստան, 2 մեծադիր հատոր, պատկերազարդ	ԴԱՀ. 200
Բամանեան, Իսկական Պատմութիւն Հայոց, պատկերազարդ. կաղափարած	50
» Հայաստանի Քարտէսը	5
Լուսինեան-Բամանեան, Բառարան Հայ.-Գաղ.	150
Նուպարեան, Բառարան Գաղ.-Հայ.	150
Զրուցատուրքիւն, Հայ.-Գաղ. եւ նամակագրութիւն	50
» » Անգղ. »	50
» » Ռուս.	50



402

4013

